

ՄԵՃՄՈՒԱԷԱԽՊԱՐ

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA - I - AHBAR
Grand'Rue de Pera 65

Համբարսա իրի սեճա եանի ՉԱՐՇԵՆՊԻՆՉ ՎԵ ՃՈՒՄԱՍ ԻՐԹԵՍԻ
Կիւմլեթի նեշր օրումուր:

مجموعه اخبار
بك اوغلي تقسيم جاده قی نوسرو 70

Ղազէթեան միւթեալիդ խոսուսած իշին ՅՈՂՀԱՆՆԷՍ ԹՕԼԱՅԵԱՆԱ միւրաճալ օրումա. — Իտարէխանէ՛ Պէյօղլունտա ճատտէի քէպիրտէ ն 63

ԹԱՏՐՈՆԸ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Ապրիլ 3ին Չորեքշաբթի իրիկուսնը, Թողատի Հայ-Աւետարանական Բողոքականաց դպրոցը տեղի ունեցաւ ներկայացում մը, որուն նիւթն էր Վերջին Դատաստանը: Թէեւ մեր ներկայացումը անոր վրայով մանրամասն տեղեկութիւններ տալ չէ, սակայն կարծենք թէ յարգոյ ընթերցողք անկէ ծանօթութիւն մ'ունենալու համար երկու բառ լսելէ և գիտնալէ դժգոհ չպիտի ըլլան:

Ներկայացումը ժողովարանին մէջն իսկ տրուեցաւ: Թատերաբեմը գետնէն քիչ մը բարձրացած էր և հոն շինուած դահլիճ մը վրայ նստած էր Յիսուս Քրիստոս (աւելի ճշտօրէն զայն ներկայացնող անձը), երկու կողմերն ունենալով երկու հրեշտակներ, պատրաստ իր կամքը գործադրելու: Իր առջեւ կեցած էին արդարեւ մեծ զաւորներ խառն ի խառն, որք ահա իր Դատարանին հրամանաւ հրեշտակին կողմանէ զատուեցան: Աւաջինները ճերմակ հագուած՝ կարմիր գօտի ունէին մէջքերին: Վերջիններն ալ սեւ հագուած՝ ճամբարիտ ու բընական տիպարն էին դատապարտելոց իրենց տխուր դէմքով, լալաքին ձայնով և երկայն ու խզճալի հառաչանքներով ու ողբերով: Ասոնց ճառախօսութիւնը մերթ ընդ մերթ ընդհատել կուգար արմոնիով և ֆիւթէ բաղկացեալ պղտիկ ներդաշնակ նուագախումբ մը: Աւելցնենք նաև թէ արանց և կանանց խուռն բազմութիւն մը կը լեցնէր ժողովարանին սրահն, որ բաւական ընդարձակ է:

Բայց հիմա գանք մեր նպատակին: Ես ինծի հարցնելէ առաջ, նախ կը հարցնեմ այդ թատրոնին ներկայ գտնուող ժողովրդեան թէ ի՞նչ ըզգաց: Եթէ մի քանի անձինք հետաքրքրութենէ միայն մղեալ եկած էին, անոնք անտարակոյս երբեք կամ զբոսով երբեք տպաւորութիւն մը չունեցան: Բայց եթէ հոն կային նաեւ անձեր, որ իրենց հետաքրքրութիւնը գոհացնելէ զատ ուրիշ դիտաւորութիւն մըն ալ ունէին և հետեւեալ բար խորհեցան, մատեններ անոր նշանակութեան վրայ, անոնք անպատճառ բան մը զգացին իրենց ներսիդէին: Ի՞նչ կրնար ըլլալ անոնց կրած այն տպաւորութիւնը: Ըստ իս, եթէ այդ պահուն կայ յուզում մը, որ կարենայ մարդս գրգռել, եթէ կայ մտածում մը որ կարենայ անոր զարնել ու անոր միտքը յափշտակել, ալ Դատաստանին սարսափն ու

դողն է: Արդարեւ այն ան ու վախն ալ իրաւացի է և չեմ կարծեր թէ յարգոյ քարոզիչը այն թատերախումբը ուրիշ վախճանաւ մը ներկայացնել տուած ըլլայ:

Նոյն տպաւորութիւնը կրեցի ես ալ բայց եթէ մինչեւ սրտիս խորը չթափանձեց, առ տարբեր բան պատճառով երազելու չէ Դատաստանին, որ ինքնին խիստ զարհուրելի էր, այլ ուրիշ պարագաներու զորս հոս յայտնել յարմար չենք դատեր:

Պահ մը այդ տպաւորութեան տակ կենալէ վերջ՝ անցայ մտածողութեան և ըսի. «Ես նախապէս ալ գիտէի թէ ի կատարած աշխարհի Վերջին Դատաստան պիտի ըլլայ: Ես հաւատոյ այդ ճամբարիտեան վրայ տարակոյս մը չունէի, բայց ընդհանրապէս այսպէս չէի ազդուել: Ուրեմն, ո՛ւստի այս տարօրինակ տպաւորութիւնը, որ պատճառէ արտադրեալ, ճատ մը այլ և այլ մտածութիւններէ վերջ սա դատողութեան հասայ թէ վերացական բան մը ներթափանցի վերածուելով՝ զգալի նշանով մը կը յայտնուի և հետեւաբար աւելի ազդուութիւն կ'ստանայ: Բայց ըսի. «Միթէ վերացական բանի մը ներթափանցի ներկայացումը չէ՞նք մեր պատկերները, զոր քաղցիւր բողոքականութիւնը չուզեր ընդունիլ»: Քաղցիւր կ'ըսեմ, որովհետեւ ամէն տեղ այնպէս չէ: Յիւրաքանչեւ որչափ պատկերներ և արձաններ կը շինուին յԱնգլիա, յԱմերիկա և ի Գերմանիա. (ի հարկին փաստեր կրնամ տալ այս մասին) բայց առանց հեռուն երթալու առէք այն տեղութեանց դրամները, թղթագրօշմները, տեսէք պատկեր կը կրէ՞ն թէ չէ: Տեսէք Անգլիական դրօշակն Ս. Գեորգի, Ս. Անդրէասի և Ս. Բաթրիկի խաչերով, տեսէք Ամերիկեանը՝ 45 լուսաւորներով (1), տեսէք Գերմանականը՝ կայսերական առիւծով: Սակայն չկրնար ըսուիլ թէ Անգլիացիք, Ամերիկացիք կամ Գերմանացիք բողոքականութիւնը հասկցած չեն, քանի որ այն երկիրներն անոր օրօրոցն են և հոն է որ զայն ամենայն մաքրութեամբ և առանց այլալման պահելու ջանք կը տարուի: Մեր երկրի բողոքականք ալ անոնցմէ կախեալ են: Ասոնք, իրենց պատկերները չունենին ետք, մեր ընդունին ալ կռապաշտութիւն կը սեպեն: Արդ կը հարցնեմ, միթէ պատկերի մը առջև խոնարհիլը, աղօթելը զայն պաշտել է: Բուն պաշտելն է՝ մէկու մը պաշտել:

(1) Այս թիւն էր 1896ին:

տօն մատուցանել զայն իբր երկնի և երկրի Արարիչ ճանչնալով: Ըսէք, եղբարք, ո՞ր խենդն է որ պատկերի մ'առջեւ խոնարհած կամ աղօթած ատեն ըսէ կամ նոյն իսկ մտածէ թէ սա թուղթը կամ կտաւը, որուն առջեւ ես հիմա կ'աղօթեմ երկնի և երկրի Արարիչ Աստուածն է և ես զայն կը պաշտեմ:

Ասիկա ուղիղ բանիւ յարմար է: Ո՞ր միտքն այսպիսի ցնորք մը կըրնայ երեւակայել:

Սակայն մեր կէտը աչքէ չկորսնցնելու համար դառնանք անոր վրայ ու ըսենք: Քանի որ Դատաստանին այդ ներկայացումն արտօնեալ էր, ապացոյցն այն է որ տրուեցաւ. ինչո՞ւ արտօնեալ չըլլան մեր պատկերները, քանի որ երկուքն ալ միեւնոյն վախճանին կը ձգտին ու կը յանգին:

Ահա խօսք մը, որ կը վերջանայ հարցման կէտով և որուն պատասխանել պատշաճ է: Ուստի բողոքականութեան շատագոյններէն կը խնդրուի որ հաճին այս անշնան բեռն իրենց վրայ առնելով պատասխանել որով մատուցած պիտի ըլլան անգին և անգնահատելի ծառայութիւն մը, որուն համար շնորհակալութիւնս արգէն իսկ կը յայտնեմ:

Կարելի էր այս խնդրքն առանձնօրէն ալ ընել, սակայն տրուելիք պատասխանին շնորհիւ ոչ միայն իմ, այլ նաեւ ինծի պէս շատերուն սխալման և տգիտութեան անդունդէն ազատուիլը փափաքելով՝ աւելի յարմար դատեցի լրագրաւ ընել, որով խնդիրը հրապարակական և բոլորովին ծանօթ պիտի ըլլայ ամէնուն:

Թօգատ ՄԻՀԻՍԷՆ Զ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Հ Ո Ո Վ Մ

ԹԱՅԳԱՐԱՆ ՀՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻՑ

(Շարունակութիւն)

Մտնենք հիմա Capella Clementina կոչուած մատուռը, ասոր յատակագիծը շինած է նշանաւոր Միքէլ Անճէլօն՝ Կղեմէս Ը. Պապի հրամանաւ: Խորանի վրայ Միւսիոն պատկեր մը կայ, որ ընդօրինակուած է Անդրէաս Օսքրիի նախանկարէն: Դիմացը աչաց կը ներկայանայ Պիոս Էի հոյակապ շիրիմը, դրօշակալ Thorwaldsen արձանագործէ: Մատրանս գմբեթի խորիւսին վրայ խճանկարեայ պատկեր մը կայ, որ ընդօրինակուած է Կլայսթապի Ռաֆայէլի:

յէլի Transfigurazione նկարէն: Կաշմարին ներքեւը՝ ձախակողմը կը գտնուի Լեւոն ԺԱ. Արարիչի նշանաւոր յիշատակարանը, ուր խորաքանդակեալ է Հենրիկոս Դի գար: Սոյն կամարի ներքեւ միւս կողմ մը իննովկենտիոս ԺԱ. յիշատակարանը կանգնուած է մի սլափեցուցել խորաքանդակով, որ կը ներկայացնէ Վիեննայի 1683 թուականի նշանաւոր դէպքերէն մէկը: Ասոր աջակողմը կ'իյնայ Capella del Coro կոչուած մատուռը: Հոս կը հաւաքուին Ս. Պետրոսի եկեղեցւոյ բոլոր կանոնիկոսները, երգելու առօրեայ ժամերգութիւնը: Ասոր առաստաղը հարուստ նկարներով զարդարեալ է. նոյնպէս ուշադրութեան արժանի են կանոնիկոսաց նստարանները, գոյնզգոյն և պատուական տախտակով միմեանց վրայ ագուցուած, որոնց վրայ տեղ տեղ նկարուած են Ս. Գրգորոյ պատմական և խորհրդաւոր պատկերները: Յաջորդ կամարին տակը ալ կողմը դուռ մը կայ որուն վրայ կ'ընկնայ սափոր մը կայ, ասոր մէջ կը դրուուին, ըստ աւանդութեան, Ս. Քահանայապետաց մարմինը՝ երբ նոր կը վախճանին, մինչեւ որ հանգուցելոյն գերեզմանը պատրաստուի իրմէ նըշանակուած վայրը: Ասոր ձախակողմը մը կ'իյնայ իննովկենտիոս Ըի գերեզմանը՝ գործ Անտոնի և Պետրոսի Պալարօլ արուեստագորաց:

Մատուռէն վերջը կ'ուգայ Capella della Presentazione կոչուածը, խորանի վրայ եղող մեծ պատկերը, «Ս. Աստուածածնի ի Տաճարն ընդ ծայուիլը» կը ներկայացնէ: Ընդօրինակեալ է հռչակաւոր Ռոմանէլլիէ: Այն պատկերի նախանկարը Հոգովմայ S. Maria degli Angeli կոչուած եկեղեցւոյ մէջն է: Կամարի ներքեւն աջակողմը դուռ մը կայ որ գմբեթի մէջ ելելու համար է: ասոր վրայ յիշատակարանը Մարիամ Կղեմէս թիւնա Սթրիեսկիին է, որ ի Պարիսի Ժոն Բատիստ Գրանտէի և Պրօչինի քանդակեալ է:

Ասկից ելելով վերջապէս կը հասնինք Capella del Battistero կոչուած վերջին մատուռը: Ասի է Մայր Եկեղեցւոյ մկրտարանը: Հոս մի պորձ փութիւյ կոնք կայ, երեք մէթր և 76 հարգր. երկայնութեամբ և 1.88, հարգր. լայնութեամբ: պղնձապատ ոսկեզօծ է և խորհրդաւոր Դաւանիին ի նա քանդակեալ է: ասոր մէջ կը մատակարարուի Մկրտութեան Խորհուրդը: Խորանի վրայի փառապարգ պատկերը՝ Քրիստոսի Յովհաննէս Մկրտոյ չէն Յորդանանու եջերքը մկրտելը:

Պալատ, Պեյզըլու վե Իսթանպուլ Խաթե-
խանէէրէ՝ մաքը հալին 14(27)նի բազար
Իրթնի կիւնիւ թաթիլ օլունահապարարի

Մարտէլ.— Օ արւելեան, օ մուհապպէթի
Բօժնին զաւլանտէ պի՛ք հասըլ իտէճէկդ.
պէնի՛մ Բընէ հազընտա իմնինէթի քեա
միլէմ վաբ տըր. մագաճտիմիդէ էթմէք
խուտուտունտ հիւ պիր վազըթ իւմիտիմ
գաթի՛թ իթմէմ. «Գարընն միւրաբոր՝ ձէ՛ն
նապը Հագըրն միւրաբոր արը» տիրէր, պո-
տարպը մէսէլ քէք տօգրու տուր. պէն իտ-
թիգպալիմիդի բարլուդ կէօրիւհօրում...
Գրէտի Ֆոնսիէ իշինաւէն նէ՛ խապէր...
Յիւլիք.— Հօճէթէլէրի պանա վիրմէնիդ
լազըմ աըր, տիրէքթօր իլէ օլտն միւնա-
սէպաթմիլ սաիւսիմտէ իշ զօլալըզա պիւ-
թէճէք տիր: